ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 31-Լ

«18» 04 2023 թ. ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (այսուհետ նաև՝ Վարչություն) պետ Եղիազար Վլադիմիրի Ավագյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնին նշանակելու և Վարչության պետի տեղակալ Լուիզա Սամվելի Մանուկյանին Վարչության պետի պաշտոնին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի ապրիլի 17-ի համապատասխանաբար՝ N 166-Ա և N 169-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ե.Ավագյանի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Լ.Մանուկյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Բաղդասարյան Գևորգ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Հովհաննիսյան Աննա -	ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Մինասյան Հասմիկ -	ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությանն աջակցող բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի մայիսի 2-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ